Հետեւեալ նամակն՝ որ ինչպէս կ՚ծանուցանէ Շուշի քաղաքին մէջ Վեհ. Կաթուղիկոսի անուան տօնախմբութեան Օրը յատուկ հանդէս յօրինելով ՚ի պատիւ Նորին Վեհափառութեան տեղւոյն փոխ—Առաջնորդ արժանապատիւ Յովակիմ Վարդապետն վայելուչ սեղան մի պատրաստեր է Առաջնորդարանը ուր քաղաքին թէ՚ի հոգեւորականաց եւ թէ յաշխարհականաց արժանաւոր անձինք հրաւիրուած են. յորում եւս մի ճառ կարդալով, օրինակը ուղարկել են մեզ հրատարակելու խնդրանօք:

---

Արժանապատիւ Հայրք
Գործունեայ աշխատաւորք Արարատ
պատուական եւ ցանկալի ամսագրոյն

Անցեալ Սեպտեմբերի 28ին Մեծի Օրավարին սրբոյն Գէորգայ ցանկալի տօնն կատարելով մեր Ս. Եկեղեցին, ամենեցուն ուշը դարձրեց ՚ի վերայ նորա Անուանակից Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն եւ Տեառն Գէորգայ, որոյ տօնախմբութեանը ամենքն էլ ըղձակարօտ սպասումէին: Ուստի եւ այն օրը արժանանալով այդ ցանկալի ժամին, ամէնքն էլ իւրեանց կողմից սկսեցին ուրախութիւններն ՚ի յայտ ածել, նա՛ մանաւանդ տեղւոյս Վիճակաւոր Առաջնորդին փոխանորդ Աստուածաշնորհ Յովակիմ վարդապետն, որ այդ ուրախութիւնիցը արժանավայել սեղան կազմելով մեծ հանդիսիւ կատարել տուաւ այս տօնը, որ համարեա մեր քաղաքի մէջ առաջին անգամն է առնում: Այս հանդիսիս ներկայ գտնուեցին քաղաքիս մեծամեծքն եւ յեկեղեցականաց եւ յաշխարհականաց:

Վասնորոյ զգածեալ եւ շարժեալ այս խնդութեան տեսարանին եւ ես նուիրեցի իմ եռանդուն զգացողութեանց բերկրութիւնը Նորին Աստուածազան Վեհափառութեանն, զոր եւ ահա՛ առաքեմ գիտութեան Մեծաւորացդ Ս. Միաբանութիւնդ եւ խնդրեմ ամենախոնարհաբար փոքր ինչ տեղի տալ տպագրութեան նորին Ս. Էջմիածնեան պատուական Արարատ ամսագրոյ մէջ, ՚ի խրախուսութիւն իմ եւ այլոց յառյապայն:

Խ. Ծ., Հայր Համբարձումեան Խաչատրեանց.

---

ԲԱՆ

Բացախօսեալ ՚ի դէմս փոխանորդի Վիճակաւոր Առաջնորդի Ղարաբաղու գերապատիւ Տեառն Յովակիմայ Աստուածաշնորհ վարդապետին, եւ այլոց բազմաց հանդիսականաց, յաւուր տօնի Անուանակցի Վեհափառ Հայրապետին մերոյ Տեառն եւ Տեառն Գէորգայ Աստուածընտիր Կաթուղիկոսին ամենայն Հայոց՝ Սրբոյն Գէորգայ Մեծի Օրավարին, ՚ի տան Վիճակային Առաջնորդարանին Հայոց Ղարաբաղու ՚ի Շուշի քաղաքի, ՚ի 28ն Սեպտեմ. 1868 ամի.

Ով մեծի հանդիսի ասուրս եւ բերկրալից խնդութեան համայնիցս Յարեթեան գրոհի, զի՞նչ այս տեսարան ցնծու-

ճեան. զի՞նչ այս, որ լսի ականջս մեր և կամ յի՞նչ ակնարկեալ խնդայ մերս բընութիւն։ Օ՜ն ահա՛ 'ի դէմ, ամենեցուն՝ 'ի հայելին առեմ շարժուածոց հոգւոյն լուսաւոր արևաշող ուրախութիւն, ահա մայր մեր Հայաստան պար առեալ մանկամբք իւրովք՝ գտանի յանկոպար բերկրութեան, և անդ Լուսէջն մեր մայր Սուրբ Աթոռ լուսազգեստ ջահիւք պայծառացեալ կեդրոնացեալ կայ 'ի մէջ անթարգման հրճուանաց։

Արդ, զի՞նչ ասեմ, զի՞ զի՞նչ մեծ և հրաշափառագոյնքան զօրս տօնելի. ո՞ արդեօք զօրեսցէ լռութեամբ ընդ հանդէսս անցանել, յո՞յժ վերայ արդեօք ազդեցութիւն ինչ ո՞չ տացէ աւուրս վեհամափառ շքեղութիւն, յորում հնչի 'ի լեզուս ամենեցուն Սուրբ Անուն Վեհափառին, Անուն մեր Գլխոյն, Հօր Հայաստանի առ հասարակ։

Այո՛, ո՛ արժանապատիւ Հայր, մեք տօնեմք այսօր զյիշատակ Սրբոյ Զօրավարին, մեծին Գէորգայ. քաջ Զինուորին Քրիստոսի՝ որ յաղթող հանդիսացեալ 'ի յասպարիզի նահատակութեան՝ պսակեան մեծ կանգնեցաւ Սրբոյ Ուղղափառ Եկեղեցւոյն Քրիստոսի, և ըստ անուանն արդարև եղև երկրագործ ժիր և գործունեայ մշակ ընտիր առաքինութեան. մինչ զի զԹագուհի անօրէն կայսերն Դիոկղետիանոսի զԱղէքսանդրէն դարձոյց 'ի մոլար և 'ի դիւապաշտ կռապաշտութենէն 'ի ճշմարիտ յԱստուածահաստատ օրէնս Քրիստոնէութեան։ Այլ և 'ի յուշ ածեմք անընդհատ ընդ նմին զԱնուանակից քաջ յաղթողին՝ զՎեհափառ մեծ Հայրապետն մեր՝ զՏէր Գէորգ, որոյ մեծութիւն քան զմագնիս յինքըն գրաւէ հոգւորապէս զուշ ամենեցուն և յակճիռս սուրբ խորհրդածութեանց կացուցանէ. Բանզի Սա՛ Հայեալ միայն պարծանք մեր. Սա՛ Թագ Հայաստանի, Սա՛ մեր Գլուխ, 'ի Սա՛ հայիմք մեք և 'ի Սմանէ՝ ակն ունիմք զբարօրութիւնս մեր ըստ ամենայնի, ուստի և Սմա՛ միայնոյ Աստուծով փառք և պատիւ 'ի միջի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ։

Արդարև տօն ցնծութեան, տօն խընկելի։

Ուրեմն, ո՛ Սուղայք Հայկեան ելէք փութով, ելէք յայս յասպարէզ յերիւրել 'ի մեծի տօնիս զբան պատշաճական. ո՞ւր քերթողաբանն քաջավարժ, թող մատիցէ 'ի յայս հանդէս դրուատել զՏէր մեր պատուական, զխնամակալու Հայր մեր մեծի և փոքու, հեռաւորաց և մերձաւորաց, զժառանգն ասեմ զԼուսաւորչին մերոյ Աստուածարեալ Աթոռոյն, յոր պանծամք աներկբայ վստահութեամբ, թէ քաջավայելուչ բարեկարգութեամբքըն իւրովք երջանիկս կացուսցէ զմեզ և բարեբաստիկս, և այսպէս հետևեալ նախնւոյն իւրոյ ընթացից, Ներսէսի Մեծի հայրապետին, անջինջ տայ տպաւորել յիւրաքանչիւր սրտի զգեղեցիկ Անուն իւրոյ Աստուածային Վեհափառութեանն։

Այսօ՛վ մեծաժողով հանդիսականք, շարժառիթ բերկրապատար ցնծութեան

համախմբեսցուք՝ փայլի յաւուր մեծի տօնիս ոչ այլ ինչ է՛ եթէ ոչ՝ լոյս օգտի և փառաց Ս. Էջմիածնի Հայոց, որ յուսամք անշուշտ 'ի Վեհափառ Հայրապետէն մերմէ. վասն զի Թէպէտ և ամենեքեան ցանկան այսմ, այլ 'ի կատար ածել գործ է Նորին Աստուածարեալ Տեառն. Թէպէտ և ամենեքեան ջան 'ի գործ եդեալ աշխատ լինին առ այս, բայց այդ ամենայն ձգանց և ջանից գլխաւորումն գործ է Նորին սրբութեան, և զի Թէպէտ ամենեքեան կամին յառաջադէմ նկատել 'ի մտաւորական զարգացմունս, որով արդարև մարդ լինի մարդ կատարեալ, բայց գլխաւոր ձեռնտուութիւն յայսմ և կարողութիւն գործ է Նորին Վերնաշնորհ մեծութեան. զի նա գլուխ և մեք անդամք, Նա առաջնորդ և մեք հետևորդք, Նա առիթ մերոյ խաղաղութեանց և բարելաւութեանց, և Նա է որ ըստ ամենայնի բարեկարգ պահեսցէ զմեզ, որպէս սուրբ գլուխ կենդանի զամենայն մասունս մարմնոյ — զհուսկն առացից. նովաւ մեր պարծանք և մեր հաւատարմութիւն՝ Նորին բերկրալից փոխթարութիւն.

Ահա՛ յայս իսկ օգտաւէտ արդիւնաւորութիւնս պանծացեալ խնդայ Հայաստան, խնդան և զաւակունք նորին, հաւատարիմ հանդիսականք, զի հասարակացն շահ 'ի խնկելի տօնախմբութենէս և ցանկալի արդիւնք մերոյ այսորիկ խնդութեան և բերկրութեան հիմնեալ, կանգնեալ է յազգօգուտ իրողութիւնս մեծի Հօրն մերոյ Աստուածազօրի, սակս որոյ քաջայոյս եմք անվհատ սրտիւ, թէ՝ աղդի ազգի օգուտս օժանդակելով մեզ՝ յաւէրժ և տոկունս արասցէ զմերս բերկրալից ցնծութիւն.

Ո՛ն հապա եկեալ այսօր անձամբ առ Ձեզ, Գերապատիւ Հայր, դիմեմք անշուշտ 'ի սիրտ և 'ի հոգի առ Վեհափառն մեր Տէր Գէորգ, 'ի յայտ ածել նմա զխղճս և զբաղձանս խանդակաթ սրտից մերոց, և սիրտ 'ի բերան առեալ զուգաձայնել համբարբառ. ընկալ զմեզ սիրով 'ի գիրկս քո, բուրեա զհոտ անուշից շրթանցդ քաղցրամուք 'ի բերան մեր գոհութեան. զի իւր անոյշ է թափեալ 'ի գլուխ Քո, ո՛վ Հայր Աստուածընտիր և բարերար մեր. և ստինք քո՝ որ զիմաստից զկաթն ջամբեն, քաղցր քան զգինի. ընկալ զմեր սրտից անկեղծ գոհութիւնն, զոր նուիրեմք Ձեզ, ո՛ Արևդ կենաց մերոց, լոյս տեսոյ աչաց մտաց մերոց, լո՛յս՝ որ անշիջանելի ճառագայթիւքն յար և յաւէրժ լուսաւորս պահեսցէ զմեզ. ընկալ սիրով, ո՛ Գերընտիր Ծնող, և զգերարտասրալից ցնծութեամբ Ձեզ տուեալ ձայնս, որ գոչեմք ցնծալից շրթամբք. "Շնորհաւոր տօնախմբութիւն, շնորհաւոր Տօն Ձեր բարերար".

Արդ՝ եկայք դիմեսցուք, ո՛վ Հայր Պատուական և Իշխանք և բարերարք, առ բարձրեալն Աստուած, ունելով մեզ առաջնորդ զսիրելին իւր զսուրբ վէմն Գէորգ, զորոյ զտօնն կատարէ այսօր Եկեղեցիս մեր մեծաւ ցնծութեամբ

և խնդրեսցուք ՚ի Նմանէ շնորհել զերկարութիւն կենաց Հօրս մերոյ Աստուածազգեաց. խնդրեսցուք և աղաչեսցուք պատուահասցէ այսօր զմիակ Ամենատէրն, զի զԱջ իւր ամենազօր հովանի արասցէ ՚ի գլուխ մեծի Հովուապետիս մերոյ, որով ՚ի լուսաշաւիղ ճանապարհ վարեալ՝ որդիս լուսոյ և որդիս տուընջեան զմեզ արասցէ. Ամէն.

---

Յաւուր օրհնութեան Սրբալոյս միւռոնի ՚ի 29. սեպտեմբերի անցեալ ամոյ, որ Վարագայ խաչի տօնի օրն էր, Օդեսայի եկեղեցւոյ Արժանապատիւ տէր Յովհաննէս քահանայն ՚ի մխիթարութիւն ժողովրդոց՝ իւր հոգևոր քարոզի մէջ բացատրելով Վարագայ սուրբ Նշանի պատմութիւնը, ծանուցել է ժողովրդոց նոյն աւուր միւռոնի օրհնութեան մեծահանդէս կատարումը՝ մաղթելով յԱստուծոյ հաղորդ առնել հոգևորապէս նոցա Հոգւոյն սրբոյ շնորհաբաշխութեանը և օրհնութեան. և իւր հոգևոր խրատը ուղարկել է նամակով առ մեզ Ամսագրիս մէջ հրատարակելու. բայց մենք առ ժամս այսչափ միայն հաղորդելով մեր Արգոյ բաժանորդաց՝ կ՚գովեմք յիշեալ քահանային եռանդը, որ միշտ փոյթ ունի ըստ իւր պարտաւորութեանը հոգևոր խրատներով մխիթարել իւր ժողովուրդը.

Շամախւոյ մեր Արժանագով Թըղթակից Ուսուցիչ նոյն քաղաքի դպրոցին Ա. Ս. Շահնազարեանց իւր նամակովը կ՚հաղորդէ մեզ հրատարակել Արարատոյ միջոցաւ ՚ի քաջալերութիւն ազգանոյ Նադվօրնի Սօվէտնիկ Տփխիսեցի Ազնուաշարմ Անտօնի Սալաթեան Պօրղոնեանց ազգասիրական առատաձեռնութիւնը. որ այցելութիւն առնելով Հայոց հոգևոր դպրոցի տեղւոյն, նուիրել է յօգուտ ուսանող մանկանց՝ երեսուն րուպլի արծաթ, ուստի մեք ևս գոհութեամբ կ՚հրատարակենք յօրինակ Ազգի բարեպաշտից.

---

## ԽԱՐՈՅԱԿԱՆՔ

Որ յուսայ ՚ի մեծութիւն՝ այնպիսին կործանեսցի. իսկ որ օգնական լիցի արդարոյ՝ ծագեսցի.

Լաւ է փոքր բաժին երկիւղածութեամբ, քան գանձս մեծամեծս աներկիւղածութեամբ.

Որ ածէ զունկն ոչ արդարացի. . :

Զինչ օգուտ իցէ մարդոյ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ.

Մի՛ գանձէք յերկրի, ուր ցեցք և ուտիչք ապականեն. և ուր գողք ական հատանեն և գողանան.

Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազում, և քան զարծաթ և զոսկի շընորհք բազում.

---

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ